

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ
2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ՆԻՍՏԻ

Նախագահում էր՝

ՀՀ գլխավոր դատախազ Ա. Դավթյանը:

Մասնակցում էին կոլեգիայի անդամներ՝

Արմեն Հարությունյանը, Հ.Ասլանյանը,
Դ.Մեքոնյանը, Արտավազ Հարությունյանը,
Վ.Մուրադյանը, Արտակ Հարությունյանը,
Գ.Բաղդասարյանը, Վ.Ռաֆայելյանը, Գ.Պողոսյանը,
Մ. Ապերյանը, Ե. Ավագյանը, Ր.Ասլանյանը:

Ներկա էին՝

ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Տ. Ամբարյանը, ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով վարչության պետ Ա. Փանոսյանը, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Գ. Թովմասյանը, ՀՀ գլխավոր դատախազի մամուլի քարտուղար Բ.Մելքոնյանը:

Հրավիրվել էին՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ Ա.Աֆանդյանը, Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազ Ռ.Խաչատրյանը, Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների դատախազ Ս.Խաչատրյանը, Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազ Գ.Գևորգյանը, Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազ Ա.Սիմոնյանը, Շենգավիթ վարչական շրջանի դատախազ Ա.Զիչոյանը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Ա. Արսենյանը, Լոռու մարզի դատախազ Գ.Էլիզբարյանը, Արմավիրի մարզի դատախազ Վ.Հովհաննիսյանը, Արագածոտնի մարզի դատախազ Դ.Վեքիլյանը, Արարատի մարզի դատախազի պաշտոնակատար Ա. Հակոբյանը, Տավուշի մարզի դատախազ Ա.Մարությանը, Գեղարքունիքի մարզի դատախազ Ս.Մնացականյանը, Վայոց ձորի մարզի դատախազ Ն.Ավագյանը, Սյունիքի մարզի դատախազ Վ.Հարությունյանը, Կոտայքի մարզի դատախազ Վ.Միլիտոնյանը, Շիրակի մարզի դատախազ Կ. Գաբրիելյանը:

Հրավիրվել և կոլեգիայի նիստին մասնակցում էին՝

Օրակարգի 1-ին հարցով՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Ղամբարյանը, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի տեղակալ Մ. Բաբայանը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության պետ Մ. Դուրյանը, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության պետ Մ. Համբարձումյանը:

Օրակարգի 2-րդ հարցով՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Ղամբարյանը, ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Ն. Հարությունյանը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության պետ Գ. Սիմոնյանը, ՀՀ քրեական հետախուզության գլխավոր վարչության 3-րդ վարչության պետ Ն. Դուրյանը, Արդարադատության ակադեմիայի ռեկտոր Ս. Առաքելյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2015թ. ընթացքում ՀՀ դատարանների կողմից կայացված արդարացման դատավճիռների ուսումնասիրության արդյունքները:

Զեկուցող՝ Գ. Բաղդասարյան՝ ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ

Զեկուցողն, ընդգծելով կատարված ուսումնասիրության նպատակը, այն է՝ թվային վիճակագրական տվյալներ ներկայացնելու հետ մեկտեղ բովանդակային վերլուծությամբ վեր հանել արդարացման դատավճիռների հիմքում ընկած իրավունքի մեկնաբանության և կիրառման խնդիրները, այդ առումով առկա օրինաչափությունները, ներկայացրեց 2015թ. ընթացքում ՀՀ դատարանների կողմից կայացված արդարացման դատավճիռների պատճառների ուսումնասիրության արդյունքները, վեր հանված խնդիրները, ինչպես նաև ներկայացրեց առաջարկներ այդ խնդիրների լուծման նպատակով:

Արտահայտվեցին՝ Ա. Դավթյանը, Հ. Ասլանյանը, Արմեն Հարությունյանը, Արտավազ Հարությունյանը, Դ. Մելքոնյանը, Արտակ Հարությունյանը, Ր. Ասլանյանը, Ա. Ղամբարյանը, Մ. Բաբայանը, Մ. Համբարձումյանը:

Լսելով և քննարկելով ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ Գ. Բաղդասարյանի զեկուցումը՝ ՀՀ դատախազության կոլեգիան արձանագրում է, որ 2015թ. ընթացքում ՀՀ մարզերի և Երևան քաղաքի վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարաններում դատական ակտի կայացմամբ քննվել և ավարտվել է 2946 քրեական գործ՝ 3776 անձի վերաբերյալ: Նշվածներից 143 գործով կայացվել են արդարացման դատավճիռներ 167 անձի վերաբերյալ, որը կազմում է

ընդհանուր քննված գործերի 4,9 տոկոսը և անձանց 4,4 տոկոսը, այդ թվում՝ 101 գործով /3,5 տոկոս/ 116 անձ /3 տոկոս/ արդարացվել է լրիվ, իսկ 42 գործով /1,5/ 51 անձ /1,4/՝ մասնակի:

Առաջին արյանի դատարանների կողմից արդարացման դատական ակտի կայացմամբ ավարտվել է 127 գործ՝ 148 անձի նկատմամբ, որը կազմում է ընդհանուր արդարացման դատական ակտերի 88,8 տոկոսը և անձանց 88,3 տոկոսը, այդ թվում՝ 88 գործով /61,6/ 100 անձ /59,9/ արդարացվել է լրիվ և 39 գործով /27,3/ 48 անձ /28,8/ մասնակի:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից արդարացվել է 13 անձ՝ 12 գործով, որը կազմում է ընդհանուր արդարացման դատական ակտերի 8,4 տոկոսը, իսկ անձանց 7,8 տոկոսը, այդ թվում՝ 9 գործով /6,3/ 10 անձ /6/ արդարացվել է լրիվ և 3 գործով /2,1/ 3 անձ /1,8/՝ մասնակի:

ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից լրիվ արդարացվել է 6 անձ 4 գործով, ինչը կազմում է ընդհանուր արդարացման դատական ակտերի 2,8 տոկոսը, իսկ անձանց 3,6 տոկոսը, կամ լրիվ արդարացումներով գործերի 4 տոկոսը, իսկ անձանց 5,2 տոկոսը:

Ըստ մեղսագրվող հանցագործության ծանրության աստիճանի առկա վիճակագրական տվյալներն են՝ առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ 4 գործով /2,8/ արդարացվել է 4 անձ /2,4/, ծանր հանցագործությունների վերաբերյալ 43 գործով /30,1/ 51 անձ /30,6/, միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ 64 գործով /44,8/ 79 անձ /47,3/, ոչ մեծ ծանրության հանցագործությունների վերաբերյալ 32 գործով /22,4/ 33 անձ /19,8/:

Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների արդարացման 127 դատավճիռների դեմ մեղադրողների կամ վերադաս դատախազների կողմից բերվել է 85 /66,9/ վերաքննիչ բողոք, որոնցից 44-ը կամ 50 տոկոսը մերժվել է, 9 անձի վերաբերյալ 9 գործով կամ 10,3 տոկոսով բողոքները բավարարվել են, իսկ 13-ը կամ 14,8 տոկոսն ամփոփման ժամանակահատվածում դեռևս գտնվել են քննարկման փուլում:

Արդարացման դատավճիռների դեմ բերված վերաքննիչ բողոքները մերժելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումների դեմ բերվել է 16 կամ 27,6 տոկոս վճռաբեկ բողոք, այդ թվում՝ 11 լրիվ և 5 մասնակի արդարացման դատական ակտերի դեմ, որոնցից 7-ը կամ 44 տոկոսը ՀՀ Վճռաբեկ դատարանը վարույթ ընդունելը մերժել է կամ բողոքարկման ժամկետն անցած լինելու պատճառաբանությամբ թողել է առանց քննության, իսկ վարույթ ընդունված համապատասխանաբար՝ 8 /50 տոկոս/ և 1 /6 տոկոս/ վճռաբեկ բողոքները ամփոփման ժամանակ դեռևս քննարկման փուլում են եղել:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից կայացված 12 արդարացման դատական ակտերի դեմ բերվել է 5 կամ 41,7 տոկոս վճռաբեկ բողոք, որոնցից 2-ը /40/ ՀՀ Վճռաբեկ դատարանը վարույթ ընդունելը մերժել է կամ բողոքարկման ժամկետն անցած լինելու պատճառաբանությամբ թողել է առանց քննության, 1 գործով /20/ 1 անձի վերաբերյալ վճռաբեկ բողոքը բավարարվել է, իսկ 2 /40/ վճռաբեկ բողոք դեռևս քննարկման փուլում է:

Արդարացված 154 անձից **նախնական կալանքի տակ է գտնվել 50 գործով 58 անձ կամ 37,7 տոկոսը**, այդ թվում՝ 25 գործով 28 անձ կամ 18,2 տոկոսն արդարացվել է մասնակի, իսկ 25 գործով 30 անձ կամ 19,5 տոկոսը առաջադրված մեղադրանքի ամբողջ ծավալով և ազատ են արձակվել դատական նիստերի դահլիճում:

Արարքում հանցադեպի բացակայության հիմքով քրեական հետապնդումը դադարեցվել է 10 անձի կամ 6 տոկոսի նկատմամբ, որոնցից 7 անձ կամ 4,2 տոկոսը /կամ լրիվ արդարացվածների 6,1 տոկոսը/ արդարացվել է մեղսագրված մեղադրանքի ամբողջ ծավալով և 3 անձ կամ 1,8 տոկոսը /կամ մասնակի արդարացվածների 5,9 տոկոսը/ առաջադրված մեղադրանքի մի մասով՝ մասնակի:

Արարքում հանցակազմի բացակայության հիմքով քրեական հետապնդումը դադարեցվել է 107 անձի կամ 64,2 տոկոսի նկատմամբ, որոնցից 81 անձ կամ 48,5 տոկոսը /կամ լրիվ արդարացվածների 69,9 տոկոսը/ արդարացվել է մեղսագրված մեղադրանքի ամբողջ ծավալով և 26 անձ կամ 15,6 տոկոսը /կամ մասնակի արդարացվածների 51 տոկոսը/ առաջադրված մեղադրանքի մի մասով՝ մասնակի:

Քրեորեն հետապնդելի արարքի կատարումն հիմնավորող ապացույցների անբավարարության /կատարված հանցագործությանը անձի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները/ հիմնավորմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է 48 անձի կամ 28,8 տոկոսի նկատմամբ, որոնցից 26 անձ կամ 15,6 տոկոսը/կամ լրիվ արդարացվածների 22,4 տոկոսը/ արդարացվել է մեղսագրված մեղադրանքի ամբողջ ծավալով և 22 անձ կամ 13,2 տոկոսը /կամ մասնակի արդարացվածների 43,2 տոկոսը/ առաջադրված մեղադրանքի մի մասով՝ մասնակի:

Վնաս պատճառած արարքը քրեական օրենքով իրավաչափ համարվելու հիմնավորմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է 2 անձի կամ 1,2 տոկոսի /կամ լրիվ արդարացվածների 1,8 տոկոսի/ նկատմամբ, որոնք արդարացվել են մեղսագրված մեղադրանքի ամբողջ ծավալով:

Արդարացման դատավճիռներից 19-ը կամ 13,3 տոկոսը կայացվել են **մեղադրողների կողմից մեղադրանքից հրաժարվելու** արդյունքում, այդ թվում՝ 12 կամ 8,4 տոկոս /կամ լրիվ արդարացումների 11,9 տոկոսը/ գործերով կայացվել է լրիվ արդարացման և 7 կամ 4,9 տոկոս / կամ մասնակի արդարացումների 16,7 տոկոսը/ գործերով՝ մասնակի արդարացման դատավճիռներ:

Սակայն պետք է արձանագրել, որ կատարված ուսումնասիրության շրջանակներում ստացված վիճակագրական տվյալները չեն համապատասխանում «Դատախազի աշխատանքի մասին» տարեկան վիճակագրական հաշվետվության տվյալներին, որի համաձայն՝ 2015թ. ՀՀ-ում արդարացման դատավճիռ է կայացվել 64 գործով 83 անձի վերաբերյալ: Առկա անհամապատասխանությունն արդյունք է ինչպես հաշվետվության տվյալները երբեմն ոչ ամբողջական ներկայացնելու, այնպես էլ հաշվետվության վարման կարգի առանձնահատկությունների, դրանով առկա թերկարգավորումների: Մասնավորապես. առանձին դեպքերում, ՀՀ գլխավոր դատախազության վարչության դատախազի կողմից քրեական գործով կազմված մեղադրական եզրակացությունը հաստատելուց և գործը դատարան ուղարկելուց հետո, դատարանում մեղադրանքը պաշտպանել է մարզի դատախազության դատախազը, սակայն դատարանում մեղադրանքի պաշտպանության վերաբերյալ համապատասխան ցուցանիշները /ըստ էության կատարած աշխատանքը/, ինչպես մարզի դատախազության, այնպես էլ տվյալ վարչության հաշվետվությունում ցույց չեն տրվել: «Դատախազի աշխատանքի մասին» կիսամյակային և տարեկան վիճակագրական հաշվետվության վարման մասին կարգի 5-րդ բաժնի 118-րդ կետը սահմանում է, որ «Եթե քրեական գործը դատարան է ուղարկվել գլխավոր դատախազության ավագ դատախազների (դատախազների) կողմից, սակայն դատարանում մեղադրանքը պաշտպանվել է տարածքային դատախազության կամ կառուցվածքային ստորաբաժանման դատախազի կողմից, ապա դատարանում մեղադրանքի պաշտպանության վերաբերյալ համապատասխան ցուցանիշները ցույց են տրվում միայն մեղադրանքը փաստացի պաշտպանած համապատասխան դատախազության կամ կառուցվածքային ստորաբաժանման հաշվետվությունում»:

Խնդիրն այն է, որ առկա կարգը չի սահմանում գլխավոր դատախազության վարչությունների դատախազների կողմից դատարան ուղարկված գործով մեղադրանքն այլ ստորաբաժանումների դատախազների կողմից պաշտպանելու դեպքում տվյալների վարման

կարգը: Բացի այդ, ըստ վիճակագրության վարման կարգի՝ արդարացման դատավճիռների վերաբերյալ տվյալներում արտացոլվում են բացառապես առաջին ատյանի դատարանների դատավճիռներով արդարացման դեպքերը: Այսինքն՝ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների արդարացման դատական ակտերը և դրանցով արդարացվածի կարգավիճակ ստացած անձանց տվյալները դուրս են մնում վիճակագրությունից: Նույն կերպ՝ հաշվետվության վարման կարգով պայմանավորված՝ քրեական գործի վարույթն արդարացման հիմքով կարճելու դեպքերը հաշվառվում են առանձին և չեն ներառվում ո՛չ արդարացման դատավճիռների և ո՛չ էլ արդարացված անձանց թվում:

Ուտի անհրաժեշտ է ՀՀ դատախազության համակարգում «Դատախազի աշխատանքի մասին» կիսամյակային և տարեկան վիճակագրական հաշվետվության վարման կարգում կատարել համապատասխան փոփոխություններ:

Ըստ «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության տվյալների՝ արդարացման դատավճիռների թիվը նախորդ 5 տարիներին շարունակաբար աճել է: Այսպես, 2010թ. արդարացման դատավճիռ է կայացվել 19 գործով /0,65 տոկոս/ 31 անձի վերաբերյալ /0,79 տոկոս/, 2011թ.՝ 29 գործով /1,08տոկոս/ 53 անձի /1,41 տոկոս/, 2012թ. 26 գործով /1,09 տոկոս/ 40 անձի /1,28 տոկոս/, 2013թ. 47 գործով /2,01 տոկոս/ 63 անձի /2,05 տոկոս/, 2014թ. 46 գործով /2,31 տոկոս/ 59 անձի /2,39 տոկոս/ վերաբերյալ:

Կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա կոլեգիան արձանագրում է արդարացման դատական ակտերի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերի տարանջատմամբ՝ դրանցից յուրաքանչյուրի շրջանակներում հարաբերականորեն ինքնուրույն իրավամեկնաբանության կամ իրավունքի կիրառման խնդիրներ:

Այսպես.

Կոլեգիան արձանագրում է, որ հանցագործության դեպքի բացակայության հիմքով արդարացման դատական ակտերի մի խումբը կայացվել է՝ հիմք ընդունելով Գ. Խնուսյանի և մյուսների վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումն առ այն, որ բոլոր այն դեպքերում, երբ նույն արարքի համար կարգապահական կամ վարչական պատասխանատվությանը հաջորդած քրեական դատապարտումը կամ քրեական հետապնդումը գնահատվում է որպես նույն արարքի համար կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտում, քրեական հետապնդումը դադարեցնելիս պետք է ղեկավարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով (բացակայում է հանցագործության դեպքը), ինչն իր բնույթով արդարացնող (ռեաբիլիտացիոն) հիմք է: Մինչդեռ, կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի անշեղ իրացմանն ուղղված ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները գործնականում պատշաճ չեն իրացվում: Հատկապես խնդրահարույց է դատապարտման կրկնակիությունը որոշելու համար էական և Սերգեյ Զոլոտովսինի վերաբերյալ գործով ՄԻԵԴ վճռով, ինչպես նաև Դավիթ Բաբայանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ սահմանված՝ «միևնույն արարք» հասկացության մեկնաբանությունը: Հիմնական և գլխավոր կանոնն առ այն, որ այն արարքի փաստերը, որի համար անձը վարչական կամ կարգապահական սանկցիայի է ենթարկվել, պետք է համընկնեն այն արարքին, որի համար անձը հետապնդվում է, չի պահպանվում և դատարանները շատ հաճախ կրկնակի դատապարտում կամ քրեական հետապնդում են արձանագրում կարգապահական կամ վարչական վարույթի հիմք հանդիսացած արարքի հետ որոշակիորեն կապված, բայց դրա հետ չնույնացող արարքի համար անձի քրեական հետապնդման դեպքում:

Արդարացման դատական ակտերի գերակշռող մեծամասնությունը կայացվել է արարքում հանցակազմի բացակայության հիմքով: Քրեական հետապնդումը բացառող այս հիմքը ներառում է հարաբերականորեն ինքնուրույն մի քանի խումբ խնդիրներ, որոնք ի

վերջո հանգում են կատարված արարքի և ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված հանցակազմի հատկանիշների անհամապատասխանությանը:

Այդ շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում արարքի քրեաիրավական հատկանիշների իրավամեկնաբանության խնդիրները: Թեև կոնկրետ արարքում հանցագործության հատկանիշների առկայությունը որոշելը բոլոր դեպքերում մտավոր-գնահատողական գործունեություն է, բայց ընդհանրապես հանցագործության և առանձին հանցակազմերի առանձին հատկանիշներ ՀՀ քրեական օրենսգրքով ձևակերպված են որպես զուտ գնահատողական հասկացություններ: Արարքում հանցակազմի բացակայության հիմքով կայացված արդարացման դատական ակտերի ուսումնասիրությունը թույլ է տալիս դրանցում տարանջատել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի գնահատողական և ոչ գնահատողական քրեաիրավական հատկանիշների տարամեկնաբանությամբ պայմանավորված արդարացման դատական ակտեր: Նշվածից ելնելով՝ կոլեգիան արձանագրում է արարքի ոչ գնահատողական և արարքի գնահատողական քրեաիրավական հատկանիշների իրավամեկնաբանության խնդիրներ:

Հանցակազմի բացակայության հիմքով կայացված արդարացման դատական ակտերի մի մասը պայմանավորված է ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված հանցակազմերի հատկանիշների տարակերպ մեկնաբանություններով: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ շարունակվում են այն քրեաիրավական նորմերի իրավամեկնաբանության խնդիրները, որոնց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է հայտնել՝ մեկնաբանելով դրանք:

Հատկապես մտահոգության տեղիք է տալիս խարդախության գործերով դատական պրակտիկայի, այդ թվում՝ արդարացման դատական ակտերի ուսումնասիրությունը, որը վկայում է, որ քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարումից խարդախության հանցակազմը սահմանազատելու գործնական խնդիրը լուծելուն միտված ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները դեռևս չեն հաջողել այդ առումով իրավակիրառ պրակտիկան միասնականացնելու առաքելությունը: ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի դրույթները շարունակում են կիրառվել տարածամկետ վճարման պայմանով գույքի առուվաճառքի և ծառայություններ մատուցելու համար գույք վերցնելու հետ կապված վեճերի նկատմամբ: Այդ առումով միասնական չէ, առաջին հերթին, դատական պրակտիկան, որում նույնանման փաստական հանգամանքներով դեպքերը շատ հաճախ ստանում են տարբեր իրավական գնահատականներ:

Դեռևս շարունակում է արդիական մնալ խուլիգանությունների քրեաիրավական որակման խնդիրը, որն առավելապես կապված է խուլիգանական շարժառիթի ընկալման և այն հարակից շարժառիթներից տարանջատելու չափանիշների մեկնաբանության հետ և, բնականաբար, խուլիգանության դեպքերով չի սահմանափակվում՝ կապված լինելով մարդու դեմ ուղղված հանցագործությունների որակյալ տեսակների իրավական գնահատման հետ:

Այս առումով խուլիգանության հանցակազմի վերաբերյալ Շահեն Հախվերդյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները գործնականում մեկնաբանվում են չափազանց լայն և խուլիգանական չեն համարվում անձի այն գործողությունների հիմքում ընկած շարժառիթները, որոնք կատարվում են իր իսկ անպարկեշտ վարքագծին դիմացինի պատասխան, կանխող, թեկուզ կոպիտ դիտողություն ենթադրող գործողությունից հետո: Բոլոր այդ դեպքերում արարքը դիտվում է որպես վրեժի շարժառիթով կատարված՝ անտեսելով, որ տվյալ անձի վրեժն արտահայտվում էր իր իսկ անպարկեշտ վարքագիծը խափանող կամ կանխող գործողության նկատմամբ:

Խուլիգանության դեպքերի իրավական գնահատման խնդիրները միայն դրանով չեն սահմանափակվում: Առկա են խնդիրներ ՀՀ վճռաբեկ դատարանի այն իրավական

դիրքորոշմամբ պայմանավորված, որ արարքը զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանություն կարող է որակվել, եթե հանցավորը խուլիգանական գործողություններ կատարելու ընթացքում զենք կամ որպես զենք օգտագործվող առարկայով մարմնական վնասվածք հասցնի կամ փորձի հասցնել, կամ էլ նրա գործողությունների հետևանքով անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծվի: Նշված իրավական դիրքորոշումն իր գոյության արդեն շուրջ 10 տարիների ընթացքում իրավակիրառ պրակտիկային խորթ է մնացել: Դատական պրակտիկան տարբերակված մոտեցում ունի հանցակցության դեպքում համակատարողներից մեկի կողմից զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրման որակյալ հատկանիշը բոլոր համակատարողներին վերագրելու հարցում: Եթե ավագակության հանցակազմի դեպքում ըստ դատական իրավունքի այդ հատկանիշի առկայության համար բավարար է համակատարողներից մեկի կողմից այդպիսի առարկաների գործադրումն ու մյուսների կողմից դրա գիտակցումը, ապա խուլիգանության գործերով դատական պրակտիկան անհասկանալի պատճառով դուրս է մնացել հանցակցության գնահատման այս մոտեցումից և հատուկ շեշտադրվել արարքների անհատականացման վրա:

Վերը նշվածից ելնելով՝ կոլեգիան արձանագրում է, որ խարդախության, խուլիգանության հասարակ և որակյալ տեսակների որակման խնդիրները ենթակա են առանձին ինքնուրույն ուսումնասիրության և քննարկման, որոնք պետք է նախատեսվեն ՀՀ դատախազության աշխատանքի ծրագրում:

Շարունակում է վիճահարույց մնալ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով նախատեսված ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելու հանցակազմի մեկնաբանության խնդիրը: Բացի այն, որ մշտապես վիճելի է եղել ի վերջո սահմանադրական արդարադատության շրջանակներում լուծում ստացած՝ նշված արարքի քրեականացման իրավաչափության հարցը, շարունակ քննարկումների առարկա է հանդիսացել նաև դրա օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմի մի քանի հատկանիշների մեկնաբանությունը:

Այս առումով ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածի դրույթը մեկնաբանելիս, դրանով նախատեսված ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելու հանցակազմի առկայությունը չպետք է պայմանավորել տուժած անձանց օգնություն ցուցաբերելուց, պատահարի մասին իրավապահ մարմիններին տեղեկացնելուց կամ կատարված արարքի և դրա հետևանքներին առնչվող հանգամանքների բացահայտմանն աջակցելուց անձի խուսափելու հետ:

Արդարացման դատավճիռների կայացման պատճառների շարքում առանձին տեղ են զբաղեցնում արարքի գնահատողական քրեաիրավական հատկանիշների մեկնաբանության խնդիրները: Նյութական հանցակազմերում օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հանրորեն վտանգավոր հետևանքը ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներում նախատեսված է «ծանր հետևանք» կամ «էական վնաս» հասկացություններով, որոնք բոլոր դեպքերում գնահատողական են և քրեական հետապնդման մարմինների ու դատարանի կողմից դրան տրված գնահատականները երբեմն ուղղակի չեն համընկնում:

Ուստի կարևոր է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմերի հատկանիշ հանդիսացող «էական վնաս», «ծանր հետևանք» և այլ գնահատողական հասկացությունների՝ գործի բոլոր հանգամանքների համատեքստում դիտարկելու անհրաժեշտությունը:

Թեև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի գնահատման հարցում դիրքորոշումների տարբերությամբ պայմանավորված արդարացման

դատավճիռները կոնկրետ հանցակազմի հատկանիշ հանդիսացող զուտ գնահատողական հասկացությունների մեկնաբանության հետ կապ չունեն, սակայն ձևականորեն որևէ հանցակազմի հատկանիշ պարունակող արարքի ցածր հանրային վտանգավորությունը կամ նվազ կարևորությունը ինքնին գնահատողական է:

Այս հարցում կարևոր է այն հանգամանքը, որ յուրաքանչյուր գործով հանցագործության առարկայի նվազ չափերի հաստատման դեպքում դրա հանրային վտանգավորության աստիճանը պետք է քննարկել ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի համարեքստում՝ նկատի ունենալով, որ անզգուշությամբ կամ մեղքի երկու ձևով կատարված հանցագործությունները, որոնց հանրորեն վտանգավոր հետևանքները, անձի դիտավորությունից դուրս են, ուստի կամքից անկախ են, չեն կարող գնահատվել որպես նվազ կարևոր:

Կոլեգիան անդրադարձավ նաև արարքի ապաքրեականացմամբ պայմանավորված արդարացման դատական ակտերի կայացման խնդրին և սահմանադրորեն և կոնվենցիոնար մակարդակում երաշխավորված՝ «չկա հանցանք չկա պատիժ» հանրաճանաչ սկզբունքին:

Սույնով կարևորվեց անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը՝ նախկինում հարուցված քրեական հետապնդումները ներկայում ապաքրեականացված արարքների համար բացառելու ուղղությամբ:

Բացի այդ, կոլեգիան անդրադարձավ մի շարք խնդիրների, որոնք վերաբերում են արարքի քրեաիրավական հատկանիշների ապացուցման կամ հանցակազմի հատկանիշների հետ դրանց նույնության հաստատմանը և մեղադրանքի ձևակերպմանը:

Այս առումով կարևոր է հատկապես մեղադրանքի ձևակերպումներում մեղադրանքի փաստական կողմի նկարագրության սխալների անթույլատրելիությունը, դրանով պայմանավորված դատախազական հսկողության և վերահսկողության ուժեղացումը:

Վերը նշվածից բացի կոլեգիան անդրադարձավ նաև այն արդարացման դատավճիռներին, որոնց հիմքում դրվել են վնաս պատճառած արարքի իրավաչափությունը և կատարված հանցագործությանը անձի մասնակցությունն ապացուցված չլինելը:

Հանցագործության կատարման անձի մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով արդարացման դատավճիռների գերակշիռ մեծամասնությունը պայմանավորված է «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշի գնահատողականությամբ: Այդ կասկածությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը սահմանելով ապացույցների գնահատման առանձին հստակ կանոններ, բնականաբար, չի բացառել և չէր էլ կարող բացառել կոնկրետ գործերով դրանք գնահատելիս դատական և մինչդատական վարույթն իրականացնող մարմինների դատավարական դիրքորոշումների տարբերությունները:

Հանցագործությանն ամբաստանյալի մասնակցությունն ապացուցված չլինելու ամենախնդրահարույց իրավիճակներից մեկը շարունակում է մնալ բացառապես մեկ՝ ձեռքբերողի կամ հյուրասիրվողի ցուցմունքի հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածով մեղադրանքում անձին մեղադրելու իրավիճակը: Դատական պրակտիկան անվերապահորեն վկայում է, որ մեկ անձի ցուցմունքն օրինաչափորեն չի կարող բավարար համարվել ցուցմունք տվող անձին թմրամիջոց իրացնելու համար մեկ ուրիշին մեղադրելու համար:

Իրավակիրառ պրակտիկայում պատշաճ չի իրացվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1. կետի դրույթից բխող այն պահանջը, որ անձին առաջադրված մեղադրանքը չի կարող հիմնվել ապացույցների բավարար ամբողջությամբ չհիմնավորված խոստովանական ցուցմունքի վրա:

Կոլեգիան անդրադարձավ նաև հանցագործության կատարմանն անձի մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով կայացված արդարացման այն դատավճիռներին, որոնցով դատական քննության ընթացքում վիճարկվել են մեղադրանքի հիմքում դրված ապացույցների՝ քննիչի կամ հետաքննության մարմնի աշխատակցի կողմից կոպիտ խախտումներով ձեռք բերված լինելու հանգամանքը՝ վերջիններիս կողմից հանցանք կատարելու մասին տեղեկություններ հայտնելով:

Նշված ապացույցների թույլատրելիության ու արժանահավատության և, ի վերջո, գործով անհրաժեշտ ապացուցողական չափանիշի առկայության մասին դատական գնահատականն էականորեն պայմանավորված է լինում նաև այդ տեղեկությունների ստուգմանն ուղղված անհրաժեշտ գործողությունների արդյունքներով: Քննիչի կամ հետաքննության մարմնի աշխատակցի կողմից հանցանք կատարելու մասին տեղեկությունները քրեադատավարական օրենքով սահմանված կարգով չստուգելը չփարատված կասկած է առաջ քաշում այդ գործողությունների արդյունքում ստացված ապացույցների առնվազն արժանահավատության վերաբերյալ:

Այս առումով կոլեգիան կարևորում է մեղադրանքի հիմքում դրված ապացույցը վիճարկելիս ստացված՝ հետաքննության կամ նախաքննության մարմնի աշխատակիցների կողմից կատարված առերևույթ հանցագործության մասին տվյալների՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պատշաճ իրավական ընթացակարգի պայմաններում պատշաճ ստուգումը, ինչպես նաև բոլոր նման դեպքերում մինչդատական վարույթում դատավարական խախտումներ թույլ տված հետաքննության, նախաքննության մարմինների աշխատակիցների, այդ խախտումներն անտեսած դատախազների վարքագծի քննարկման առարկա դարձնելու հարցը:

Նշվածից բացի, կոլեգիան արձանագրում է, որ արդարացման դատավճիռների մի մասի հիմքում ընկած են քրեական հետապնդման մարմինների կողմից մինչդատական վարույթում թույլ տրված, այնուհետև չարձանագրված ու հնարավորության դեպքում չշտկված խախտումները և որպես այդպիսիք նշվում են՝

1. գործի նյութերով հարուցված քրեական գործում առաջին գործով ձեռք բերված և պատճեններով կամ բնօրինակներով նոր հարուցված քրեական գործում առանձնացված ապացույցների թույլատրելիության խնդիրը:

Այս առումով կոլեգիան արձանագրում է, որ առկա տարամեկնաբանություններն օբյեկտիվորեն պայմանավորված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի իրավակարգավորումների և Կարեն Սարուխանյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հակադրությամբ՝ նկատի ունենալով, որ եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 3-րդ մասից ուղղակիորեն բխում է առանձնացված ապացույցների օգտագործման իրավական հնարավորությունը, ապա նշված դիրքորոշմամբ վճռաբեկ դատարանը բացարձակություն է տվել ցուցմունքները տվյալ գործով ձեռքբերված լինելու հանգամանքին՝ այն կապելով անձի իրավունքի հետ՝ իմանալու, թե որ քրեական գործով է հարցաքննվում:

Սույնով դիտարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածում լրացում կատարելու մասին օրենսդրական նախաձեռնություն դրսևորելու անհրաժեշտությունը:

2. Բնակարանի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի երաշխավորմանն առնչվող՝ բնակարանում թմրամիջոցների, զենքի կամ արգելված այլ առարկաների առկայության մասին օպերատիվ տեղեկությունների դատավարական պատշաճ իրացման խնդիրը:

Թեև խնդիրն առավել ընդգրկուն է և կապված է ոչ միայն արդարացման դատական

ակտերի վերլուծության հետ, սակայն վերջինս ինքնին թույլ է տալիս նշել, որ քննվող կոնկրետ քրեական գործի փաստական հանգամանքների հետ չկապված վերացական օպերատիվ տեղեկություններն այդ գործով քննչական գործողությունների կատարման միջոցով իրացնելու պրակտիկական շարունակվում է: Նման արատավոր երևույթին նպաստում է նաև այն հանգամանքը, որ բացառապես օպերատիվ տեղեկությունների հիման վրա խուզարկություն թույլատրելու դատական պրակտիկական թեև զգալիորեն շտկվել է, բայց դեռևս բացառված չէ: Մասնավորապես, առանձին դեպքերում հետաքննության մարմնի աշխատակիցները, նախաքննական մարմնի հետ համատեղ, հափշտակությունների վերաբերյալ քրեական գործով գրությամբ օպերատիվ տեղեկություններ են տրամադրում որևէ անձի մոտ իբր հափշտակված առարկաներ գտնվելու մասին՝ իրականում ունենալով օպերատիվ տեղեկություններ՝ նրա մոտ այլ առարկաների, օրինակ՝ թմրամիջոցի կամ զենքի առկայության մասին: Դրանից հետո նախաքննական մարմինը բնակարանում խուզարկության միջոցով իրացնում է օպերատիվ տեղեկությունները՝ հայտնաբերելով գործի հետ չկապված բացարձակապես այլ արգելված առարկաներ, ինչը հիմք է դառնում նոր քրեական վարույթ նախաձեռնելու: Ընդ որում, շատ հաճախ հետաքննության մարմնի օպերատիվ տեղեկությունները կատարված քննչական գործողությունների արդյունքում չեն հաստատվում, հետևաբար օպերատիվ տեղեկությունների իրացման այդ ձևը ոչ միայն իրավաչափ, այլև որևէ առումով արդարացված չէ: Նման հիմքերով կատարված, թեկուզև դատարանի որոշմամբ թույլատրված խուզարկությունը գործի՝ ըստ էության քննության արդյունքներով դիտվում է քրեադատավարական օրենքի պահանջների խախտմամբ կատարված, իսկ դրա արդյունքում ձեռք բերված ապացույցն՝ անթույլատրելի: Գործն ըստ էության քննելիս դատարանը կաշկանդված չէ խուզարկությունը թույլատրող դատական որոշմամբ և ազատ զննահատական է տալիս նաև այդ առումով խուզարկության իրավաչափությանը: Այսինքն՝ միայն խուզարկության միջնորդությունը դատարանի կողմից բավարարված լինելը դեռևս բավարար չէ խուզարկության օրինականությունը և դրա արդյունքում ստացված ապացույցի թույլատրելիությունը հաստատված համարելու համար:

Սույնով կոլեգիան կարևորում է հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության շրջանակներում օպերատիվ տեղեկությունների հիման վրա անձի բնակարանում որոնողական բնույթի գործողություններ կատարելու և դրանք զննության տակ քողարկելու, գործի փաստական հանգամանքների հետ չկապված օպերատիվ տեղեկությունները դրա շրջանակներում կատարվող քննչական գործողությունների միջոցով իրացնելու պրակտիկական բացառելու ուղղությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

3. Կոլեգիան արձանագրում է նաև, որ պրակտիկայում դեռևս լուծված չէ բնակարանում թմրամիջոցների և այլ արգելված առարկաների առկայության մասին օպերատիվ տեղեկությունների իրացման մեկ այլ՝ մինչև քրեական գործ հարուցելն այդ առարկաները վերցնելու նպատակով բնակարանում համապատասխան քննչական գործողություն կատարելու իրավաչափության ապահովման խնդիրը:

Հետաքննության մարմնի աշխատակիցները, երբեմն առանց դատավարական եղանակով ամրագրված հիմքի, մուտք են գործում անձի բնակարան, հայտնաբերում թմրամիջոցը կամ զենքը՝ կազմելով քրեադատավարական օրենքով չսահմանված գործողություն կատարելու, օրինակ՝ «բնակարան այցելելու և առարկաներ հայտնաբերելու» մասին արձանագրություն: Իսկ որոշ դեպքերում նշված առարկաները վերցվում են թեև քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված, բայց վարույթի այդ փուլում կատարման ոչ ենթակա քննչական գործողության միջոցով: Իրավակիրառ պրակտիկայում չի ապահովվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այն պահանջը, որ մինչև քրեական գործ հարուցելը կարող է կատարվել բացառապես դեպքի վայրի զննություն:

Սույն խնդրի վերաբերյալ կոլեգիան դիտարկում է նշված դեպքերում առնվազն ունեցած տեղեկությունների դատավարական ամրագրման միջոցով (զեկուցագիր) արձանագրումն առ այն, որ տվյալ բնակարանը հանդիսանում է դեպքի վայր, որից հետո միայն դեպքի վայրի գննություն կատարելը:

4. Կոլեգիան արձանագրում է նաև, որ գործնականում տարածված է ապացույցի թույլատրելիության «իրավասու սուբյեկտի» չափանիշի վերաբերյալ քրեադատավարական օրենքի պահանջների խախտումը:

Շատ դեպքերում քննիչի վարույթում քննվող քրեական գործով առանձին քննչական գործողություններ կատարվում են հետաքննության մարմնի աշխատակիցների կողմից՝ առանց իրավասու դատավարական սուբյեկտի հանձնարարության կամ այդպիսի հանձնարարություն տրվում է օրենքով սահմանված պահանջների խախտմամբ: Արդյունքում քննչական գործողությունը կատարված, իսկ ապացույցն ստացված է լինում նման գործողություն կատարելու իրավասություն չունեցող սուբյեկտի կողմից՝ հանգեցնելով դրա անթույլատրելիության:

Քննչական և այլ դատավարական գործողությունների կատարման իրավասու սուբյեկտի չափանիշի հետ անմիջականորեն կապված է նաև վարույթն իրականացնող պաշտոնատար անձանց բացարկելու՝ նրանց իրավունքի պատշաճ իրացումը, որը ևս գործնականում երբեմն չի ապահովվում:

Նշվածի վերաբերյալ կոլեգիան դիտարկում է, որ ապացույցների թույլատրելիության «իրավասու սուբյեկտի» չափանիշը գնահատելիս ընդունելի է այն մոտեցումը, որ հետաքննության մարմնին կարող են հանձնարարվել նաև դատարանի որոշմամբ թույլատրված քննչական գործողությունները՝ անկախ նրանից, որ դրա կատարումը վերապահվել է վարույթն իրականացնող քննիչին:

5. Կոլեգիան արձանագրում է, որ արդարացման դատավճիռներում արձանագրվել, իսկ առանձին դեպքերում նաև ուղղակիորեն դրանց հիմքում դրվել են քննչական և այլ դատավարական գործողությունների կատարման կարգի խախտումներ, որոնք առավելապես հանգում են քննչական գործողություններին ընթերականեր չմասնակցելուն, քննչական գործողությունների մասնակիցներին նրանց իրավունքները և պարտականությունները, քննչական գործողության կատարման կարգը չպարզաբանելուն, գործողության ընթացքը, կիրառված տեխնիկական միջոցները, մասնակիցների մասին տվյալները չամրագրելուն, վերցված առարկաների ամբողջականությունը, դրանք փոփոխելու անհնարինությունը երաշխավորող պահանջները չապահանելուն:

Այս առումով կարևոր է կատարված յուրաքանչյուր քննչական գործողության կատարման կարգի պահպանումը, մասնակիցների շրջանակի ճշտությունը, նրանց իրավունքների պարզաբանված լինելը մանրամասն քննարկման առարկա դարձնելու և մեկ քննչական գործողության ընթացքում այլ քննչական գործողությանը բնորոշ գործողությունների քողարկված կատարումն ու այդ կերպ համապատասխան դատավարական երաշխիքների չեզոքացումը բացառելու անհրաժեշտությունը: Միաժամանակ, կարևորվում է քննչական գործողության կատարման կարգի էական խախտում թույլ տրված լինելու վերաբերյալ փաստարկներով դրա արդյունքում ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը վիճարկվելու բոլոր դեպքերում նշված գործողությանը մասնակցած ընթերակաների կամ այլ մասնակիցների հարցաքննությունը՝ թույլ տրված խախտումների շուրջ:

6. Կոլեգիան արձանագրում է նաև խնդիրներ, որոնք վերաբերում են մեղադրանքների հիմքում դրվող մի շարք փաստաթղթերի՝ որպես այլ փաստաթուղթ ճանաչվելու ապացույցի այդ տեսակի բնույթից և բովանդակությունից բխող

չափանիշների անտեսմանը:

Նշվածի վերաբերյալ ծավալվեց քննարկում հատկապես անձից բացառություն վերցնելու արձանագրությունն այլ փաստաթուղթ ճանաչելու վերաբերյալ առկա պրակտիկայի թույլատրելիության շուրջ: Նշվեց, որ բացառություն վերցնելու մասին արձանագրությունը, որպես այլ փաստաթուղթ, այլ ապացույցների թվում կարող է դրվել մեղադրանքի հիմքում, եթե բացառություն տրված անձի հարցաքննությունը հնարավոր չի եղել իրականացնել այնպիսի պատճառներով, որոնք բացառել են նրա՝ նախաքննական մարմնին ներկայանալու հնարավորությունները:

7. Բացի այդ, կոլեգիան արձանագրում է, որ դեռևս բացառված չեն նաև փաստացի քրեական հետապնդման հետևանքով անձի սահմանադրական իրավունքների խախտումների դեպքերը:

Մասնավորապես, քրեական գործերի քննության սկզբնական փուլերում անձին կասկածյալի դատավարական կարգավիճակը շատ հաճախ տրվում է ուշացումով՝ նախքան այդ նրա մասնակցությամբ այնպիսի քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելով, որոնք ոչ թե վկայում, այլ ակնհայտ են դարձնում, որ նրա նկատմամբ առկա է քրեական մեղադրանք: Փաստացի հետապնդվող անձի՝ որպես վկա հարցաքննությունները կոպտորեն խախտում են կոնվենցիայի 6-րդ հոդվածը՝ հիմք դառնալով դրա արդյունքում ստացված ապացույցների անթույլատրելիության:

Նշվածի վերաբերյալ կոլեգիան դիտարկում է, որ բոլոր այն դեպքերում, երբ առկա են անձի կողմից հանցանք կատարելու մասին վկայող այնպիսի փաստական տվյալներ /վերջինիս մասնակցությամբ կատարվող քննչական կամ այլ դատավարական գործողությունները/, որոնք կվկայեն վարույթն իրականացնող մարմնի համոզմունքն առ այն, որ նա, հնարավոր է, հանցանք է կատարել, պետք է ապահովել, որ նշված անձը ստանա համապատասխան դատավարական կարգավիճակ՝ նկատի ունենալով, որ անձին կասկածյալի դատավարական կարգավիճակ տալու համար անհրաժեշտ է նրա կողմից հանցանք կատարելու հանգամանքը դիտարկել հիմնավոր կասկածից ցածր ապացուցողական չափանիշով՝ փաստելով ընդամենը, որ տվյալ անձը կարող է հանցանք կատարած լինել:

Հանցագործության դեպքը, հանցակազմի որևէ հատկանիշը և հանցագործությանն անձի մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով արդարացման դատական ակտերի գերակշիռ մեծամասնությունը կապված է կոնկրետ գործերով անձի դատապարտման համար անհրաժեշտ «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշի մեկնաբանության և ապահովման հետ: Գործով ձեռք բերված ապացույցների բավարարության և այդ չափանիշի առկայության մասին քրեական հետապնդման մարմինների և դատարանի դատավարական դիրքորոշումները երբեմն չեն համընկնում, ինչն ընդհանուր իրավակիրառ պրակտիկայի տեսանկյունից օրինաչափ է: Միաժամանակ, քրեական դատավարությունում ապացուցման հիմնական սկզբունքները կոնկրետ գործերով ապահովված չլինելու ակնհայտ իրավիճակները չի կարելի չնկատել: Այս առումով մտահոգիչ և ուշադրության արժանի է մեղադրյալի ինքնախոստովանական ցուցմունքի՝ որպես «ապացույցների թագուհու» վաղուց անթույլատրելի ընկալումը, որը հետագա գործունեության մեջ պետք է բացառվի:

Բացի այդ, կոլեգիան փաստում է, որ արդարացման դատավճիռներում արձանագրված խախտումների բացարձակ մեծամասնությունը քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելիս քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների անտեսման հետևանք են, որոնց բացառման միջոցը հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության գործառույթից բխող լիազորությունների ինտենսիվ և պատշաճ իրականացումն է, դրանք

բացառելու դատավարական մեխանիզմներ սահմանելու անհրաժեշտություն և հնարավորություն չկա:

Ընդ որում, թեև զեկուցման ընթացքում արդարացման դատավճիռներից կատարված մեջբերումներից ակնհայտ էր, որ դատարանները շատ դեպքերում չեն պատճառաբանել թույլ տրված խախտումների էական կամ ոչ էական լինելու հանգամանքը, և այդ առումով մասնագիտական դիրքորոշումները կարող են և չհամընկնել, այնուամենայնիվ, այդ խախտումները թույլ տրված լինելու հանգամանքն ինքնին պարտավորեցնում է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ այդպիսիք բացառելու ուղղությամբ:

Ելնելով վերոգրյալից՝

ԿՈԼԵԳԻԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազներին, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին՝

1) Հանձնարարել ուսումնասիրել վարույթը կասեցված քրեական գործերի հսկողական վարույթները՝ բացառելու նախկինում հարուցված քրեական հետապնդումները ներկայում ապաքրեականացված արարքների համար:

2) ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմերի հատկանիշ հանդիսացող «էական վնաս», «ծանր հետևանք» և այլ գնահատողական հասկացությունները դիտարկել գործի բոլոր հանգամանքների համատեքստում՝ հաշվի առնելով վնասի բնույթը, չափը, նշանակությունը պետության, ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար, դրա արդյունքում նրանց կրած լրացուցիչ անբարենպաստ հետևանքները:

3) Յուրաքանչյուր գործով հանցագործության առարկայի նվազ չափերի հաստատման դեպքում, դրա հանրային վտանգավորության աստիճանը քննարկել ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի համատեքստում՝ նկատի ունենալով, որ անզգուշությամբ կամ մեղքի երկու ձևով կատարված հանցագործությունները, որոնց հանրորեն վտանգավոր հետևանքները, անձի հանցավոր դիտավորությունից դուրս, ուստի կամքից անկախ են, չեն կարող գնահատվել որպես նվազ կարևոր:

4) ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածի դրույթը մեկնաբանելիս, դրանով նախատեսված ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելու հանցակազմի առկայությունը չպայմանավորել տուժած անձանց օգնություն ցուցաբերելուց, պատահարի մասին իրավապահ մարմիններին տեղեկացնելուց կամ կատարված արարքի և դրա հետևանքների հետ կապված հանգամանքների բացահայտմանն աջակցելուց անձի խուսափելու հետ:

5) Ուժեղացնել հսկողությունն ու վերահսկողությունը անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման օրինականության և հիմնավորվածության նկատմամբ՝ ի թիվս այլոց՝ մեղադրանքի փաստական կողմի նկարագրության սխալները բացառելու համար:

6) Անձի կողմից հանցանք կատարելու մասին վկայող այնպիսի փաստական տվյալների առկայության դեպքում, երբ վերջինիս մասնակցությամբ կատարվող քննչական կամ այլ դատավարական գործողությունները կվկայեն վարույթն իրականացնող մարմնի համոզմունքն առ այն, որ նա, հնարավոր է, հանցանք է կատարել, ապահովել, որ վերջինս ստանա համապատասխան դատավարական կարգավիճակ ՀՀ իրավասու մարմնի

վարույթում քննվող քրեական գործերով: Նկատի ունենալ, որ անձին կասկածյալի դատավարական կարգավիճակ տալու համար անհրաժեշտ է նրա կողմից հանցանք կատարելու հանգամանքը դիտարկել հիմնավոր կասկածից ցածր ապացուցողական չափանիշով՝ փաստելով ընդամենը, որ տվյալ անձը կարող է հանցանք կատարած լինել:

7) Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության շրջանակներում բացառել օպերատիվ տեղեկությունների հիման վրա անձի բնակարանում որոնողական բնույթի գործողություններ կատարելու և դրանք զննության տակ քողարկելու, գործի փաստական հանգամանքների հետ չկապված օպերատիվ տեղեկությունները դրա շրջանակներում կատարվող քննչական գործողությունների միջոցով իրացնելու պրակտիկան՝ այդպիսի դեպքեր արձանագրելու դեպքում կիրառելով դատախազական ներգործության համապատասխան միջոցներ:

8) Ապահովել, որպեսզի անձի կողմից բնակարանում հանցանք կատարելու վերաբերյալ օպերատիվ տեղեկությունների իրացման համար բնակարանում որոնողական գործողություններ կատարելու անհրաժեշտության բացակայության դեպքում կատարվի դեպքի վայրի զննություն՝ տվյալ բնակարանի՝ դեպքի վայր լինելու հանգամանքը համապատասխան դատավարական եղանակով (զեկուցագրով) ամրագրելուց հետո:

9) Որոշման 8-րդ կետում նշված տեղեկությունների իրացման համար բնակարանում որոնողական գործողություններ կատարելու անհրաժեշտության դեպքում, հետևել, որպեսզի հետաքննության մարմինն ապահովի քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարությունն ու հարուցված քրեական գործի շրջանակներում կատարի բնակարանի խուզարկություն: Քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարության շեմն այս դեպքում կարող է նաև նվազեցվել, բայց ոչ այն աստիճանի, որ կասկածի տակ դրվի քրեական գործի հարուցման օրինականությունը կամ խուզարկություն կատարելու միջնորդության հիմնավորվածությունը՝ որպես բացառապես օպերատիվ տվյալների վրա հիմնված:

10) Ապացույցների թույլատրելիությունը գնահատելիս ղեկավարվել այն մոտեցմամբ, որ հետաքննության մարմնին կարող են հանձնարարվել նաև դատարանի որոշմամբ թույլատրված քննչական գործողությունները՝ անկախ նրանից, որ դրա կատարումը համապատասխան որոշմամբ վերապահվել է վարույթն իրականացնող քննիչին:

11) Բացառել քննչական կամ այլ դատավարական գործողությունը հետաքննության մարմնին հանձնարարելու քրեադատավարական իրավակարգավորումների շրջանցումը: Քննչական և այլ դատավարական գործողություններ, բացառությամբ միջազգային իրավական օգնության շրջանակներում կատարվող գործողությունների, կատարելու վերաբերյալ հանձնարարությունները հետաքննության մարմնին տրվում են դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կամ վարույթն իրականացնող քննիչի կողմից:

12) Քրեական գործով դատավարական ղեկավարում իրականացնելիս.

ա. ապահովել, որ հանցագործության դեպքը, հանցակազմի կոնկրետ հատկանիշին համապատասխանող հանգամանքը և հանցագործությանն անձի մասնակցությունը հաստատված համարելու հարցը քննարկվի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշով՝ հակառակի ողջամիտ հավանականությունը բացառելու սկզբունքով: Բացառել միայն կամ ապացույցների բավարար համակցությամբ չհաստատված մեղադրյալի խոստովանության հիման վրա անձին դատի տալը՝ ապացույցների բավարարությունը որոշելիս զերծ մնալով դրանց քանակական գնահատումից:

բ. ապահովել մեղադրանքի հիմքում դրված ապացույցը վիճարկելիս ստացված՝ հետաքննության կամ նախաքննության մարմնի աշխատակիցների կողմից կատարված առերևույթ հանցագործության մասին տվյալների՝ ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքով սահմանված պատշաճ իրավական ընթացակարգի պայմաններում ստուգումը:

գ. մանրամասն քննարկման առարկա դարձնել կատարված յուրաքանչյուր քննչական գործողության կատարման կարգի պահպանումը, մասնակիցների շրջանակի ճշտությունը, նրանց իրավունքները պարզաբանված լինելը և բացառել մեկ քննչական գործողության ընթացքում այլ քննչական գործողությանը բնորոշ գործողությունների քողարկված կատարումն ու այդ կերպ համապատասխան դատավարական երաշխիքների չեզոքացումը:

դ. քննչական գործողության կատարման կարգի էական խախտում թույլ տրված լինելու վերաբերյալ փաստարկներով դրա արդյունքում ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը վիճարկվելու բոլոր դեպքերում ապահովել նշված գործողությանը մասնակցած ընթերակաների կամ այլ մասնակիցների հարցաքննությունը՝ թույլ տրված խախտումների շուրջ:

13) Արդարացման դատավճիռների ուսումնասիրությամբ վեր հանված և արձանագրված խախտումները բացառելու համար հաղորդումներ ուղարկել համապատասխան հետաքննության և նախաքննության մարմիններին՝ վերջիններիս ուշադրությունը հրավիրելով դրանց վրա:

14) Յուրաքանչյուր եռամսյակի ավարտին դատախազության ստորաբաժանումներում անցկացնել օպերատիվ խորհրդակցություններ՝ հաշվետու եռամսյակում հետաքննության և նախաքննության մարմինների գործունեության ընթացքում արձանագրված խախտումները, այդ թվում՝ այնպիսիք, որոնց կապակցությամբ ներգործության համապատասխան միջոցներ են գործադրվել, ընդհանուր քննարկելու համար: Խորհրդակցության արդյունքներով արձանագրված խախտումները բացառելու նպատակով համապատասխան գրություն հասցեագրել հետաքննության և նախաքննության մարմիններին:

15) Ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հնարավորության կիրառումը և նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի մեկնաբանության (այդ թվում՝ քննչական գործողություններ կատարելիս թույլ տրված խախտումներն էական լինելու հարցի կապակցությամբ) վերաբերյալ դատարանում արտահայտվող դատավարական դիրքորոշումները հիմնավորելու համար ուսումնասիրել, վեր հանել, և որպես իրավական փաստարկ, օգտագործել նույնանման փաստական հանգամանքներով գործերով օրինական ուժի մեջ մտած դատավճիռներում արտահայտված դիրքորոշումները:

16) ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները, որոնցում իրավական դիրքորոշումներ են արտահայտվել կոնկրետ իրավական հարցերի վերաբերյալ, ինչպես նաև արդարացման դատավճիռները, որոնցում արտահայտված դիրքորոշումներն ընդունվել և չեն վիճարկվել դատախազության կողմից, քննարկել օպերատիվ խորհրդակցություններում՝ դրանց պատշաճ իրազեկումն ապահովելու և արձանագրված խախտումները բացառելու համար:

17) Անբողոքարկելի դարձած արդարացման դատավճիռներով արձանագրված խախտումներ թույլ տված հետաքննության և նախաքննության մարմինների աշխատակիցների նկատմամբ նախաձեռնել ծառայողական քննություն:

2. ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետին՝

1) Նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ուղարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ:

2) ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները, որոնցում իրավական դիրքորոշումներ են արտահայտվել կոնկրետ իրավական հարցերի վերաբերյալ, ինչպես նաև արդարացման

դատավճիռները, որոնցում արտահայտված դիրքորոշումներն ընդունվել և չեն վիճարկվել դատախազության կողմից, ուղարկել ՀՀ դատախազության ստորաբաժանումներին՝ օպերատիվ խորհրդակցություններում քննարկելու համար:

3) Անբողբարկելի դարձած արդարացման դատավճիռներով արձանագրված՝ մինչդատական վարույթում թույլ տրված խախտումներն անտեսած դատախազների նկատմամբ նախաձեռնել ծառայողական քննություն:

3. ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետին՝

Կազմել և ՀՀ դատախազության համակարգի դատախազություններին, նախաքննական մարմիններին, ՀՀ ոստիկանություն ուղարկել ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողբարկման վարչության կողմից կազմված՝ 2015թ. ընթացքում ՀՀ դատարանների կողմից կայացված արդարացման դատավճիռների ուսումնասիրության վերաբերյալ արդյունքները:

4. ՀՀ դատախազության աշխատակազմի ղեկավարին՝

Նախապատրաստել ՀՀ դատախազության համակարգում «Դատախազի աշխատանքի մասին» կիսամյակային և տարեկան վիճակագրական հաշվետվության վարման կարգում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին ՀՀ գլխավոր դատախազի հրամանի նախագիծ, որով կապահովվի վերաքննիչ և վճռաբեկ դատարանների արդարացման դատական ակտերի ու արդարացման հիմքով քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումների հաշվառումը արդարացման դատական ակտերի վերաբերյալ տվյալներում և կսահմանվի, որ եթե քրեական գործը դատարան է ուղարկվել վարչության դատախազների կողմից, սակայն դատարանում մեղադրանքը պաշտպանվել է նաև տարածքային դատախազության կամ կառուցվածքային ստորաբաժանման դատախազի կողմից, ապա դատարանում մեղադրանքի պաշտպանության վերաբերյալ համապատասխան ցուցանիշները ցույց կտրվեն միայն գլխավոր դատախազության վարչության դատախազների կողմից:

2. 2013-2015թթ. ընթացքում միջազգային և միջպետական համապատասխան փաստաթղթերի պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համատեքստում անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ոլորտում դատախազության լիազորությունների իրականացման արդյունավետության վիճակի վերաբերյալ կատարված ուսումնասիրության արդյունքները:

Ձեկուցող՝ Մ.Ապերյան՝ ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ

Ձեկուցողը ներկայացրեց 2013-2015թթ. ընթացքում միջազգային և միջպետական համապատասխան փաստաթղթերի պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու

համատեքստում անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ոլորտում դատախազության լիազորությունների իրականացման արդյունավետության վիճակի վերաբերյալ կատարված ուսումնասիրության արդյունքները, այդ ոլորտում առկա խնդիրները, ինչպես նաև առաջարկներ դրանց լուծման կապակցությամբ:

Արտահայտվել են՝ Ա. Դավթյանը, Դ. Մելքոնյանը, Գ. Բաղդասարյանը, Ա. Հարությունյանը, Ր. Ասլանյանը, Ա. Ղամբարյանը, Ն. Հարությունյանը, Ն. Դուրյանը, Գ. Սիմոնյանը, Ս. Առաքելյանը:

Լսելով և քննարկելով ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ Մ. Ապերյանի զեկուցումը՝ ՀՀ դատախազության կոլեգիան արձանագրում է, որ անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը ցանկացած իրավական պետության առաջնահերթություններից է՝ այնքանով, որքանով վերջիններս իրենց սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով առավել խոցելի են, մյուս կողմից երկրի ապագան և ազգային անվտանգությունը, ինչպես նաև միջազգային փաստաթղթերով ընդունված պարտականությունների իրականացման անհրաժեշտությունը պահանջում են վարել երեխաների շահերին նպատակաուղղված պետական քաղաքականություն:

Անչափահասների հանցավորության դեմ պայքարում կոլեգիան կարևորում է անչափահասների նկատմամբ առավել հետևողական մոտեցում դրսևորելու անհրաժեշտությունը՝ ընդգծելով անչափահասների գործերով արդարադատության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի մի շարք սկզբունքային նպատակներ, որոնք պետք է հանգեն հանցավորության և կրկնահանցավորության կանխարգելմանը, իրավախախտների սոցալիզացիային, անդրադառնան տուժողների կարիքներին ու շահերին:

Այս առումով կարևոր է անչափահասների հանցավորությունը՝ ընդհանրապես, և կրկնահանցավորությունը՝ մասնավորապես, կանխարգելելուն միտված միջոցառումների իրականացման համար անչափահասների հանցավորության վերաբերյալ համապատասխան վիճակագրական տվյալների մշտադիտարկումը և վերլուծությունը՝ մասնավորապես ուշադրության կենտրոնում պահելով դրա մակարդակը, կառուցվածքն ու շարժընթացը:

Առկա վճակագրական տվյալները վկայում են, որ վերջին տասնամյակներում անչափահասների հանցավորությունն անընդհատ աճի միտումներ է գրանցել: Մասնավորապես, եթե պաշտոնական վիճակագրության համաձայն 1986թ. արձանագրվել է անչափահասների կողմից կատարված հանցագործությունների 154 դեպք, ապա 2015թ. արձանագրվել է 385 դեպք: Այսինքն՝ անչափահասների հանցավորությունը 1988թ. համեմատությամբ կրկնապատկվել է: Կոլեգիան արձանագրում է նաև, որ վերջին տարիներին հատկապես աճել է անչափահասների կողմից բռնի-շահադիտական հանցավորությունը, մարմնական վնասվածքներ պատճառելու դեպքերը: Բացի այդ, նկատելի է 14-15 տարեկան և իգական սեռի անչափահասների կրիմինալ ակտիվացումը:

Նման վիճակն անհանգստացնող է, քանի որ վկայում է ՀՀ-ում անչափահասների հանցավորության երիտասարդացման, ինչպես նաև անչափահասների շրջանում բարոյահոգեբանական ոչ պատշաճ մթնոլորտի առկայության, անչափահասների վարքագծի նկատմամբ ոչ ֆորմալ վերահսկողության թուլացման, նրանց արժեքային համակարգում տեղի ունեցող բացասական փոփոխությունների մասին:

Կոլեգիան արձանագրում է, որ անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված միջազգային իրավական փաստաթղթերում

ամրագրված կարևորագույն որոշ դրույթներ ներպետական իրավական կարգավորումից դուրս են մնացել, իսկ ներպետական օրենսդրությամբ ամրագրված առկա իրավակարգավորումները հաճախ գործնական կիրառություն չեն ստանում, ինչն, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է անչափահասների գործերով զբաղվող քրեական հետապնդման մարմինների և դատարանների մասնագիտացման բացակայությամբ և անչափահասների ներգրավմամբ քրեական գործերի քննության համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների պակասով:

Մինչդեռ, անչափահասների իրավունքների և օրինական շահերի լավագույնս պաշտպանությունը պահանջում է, որ պետությունները ձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցները՝ վարելու նպատակաուղղված պետական քաղաքականություն հիշյալ ոլորտում և քաղաքականության նպատակները վերափոխեն գործնական քայլերի:

Անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված երեխայամետ քաղաքականության անքակտելի մասն են կազմում քրեական քաղաքականության հարցերը հիշյալ ոլորտում, և, որպես քրեական քաղաքականության համար պատախանատու և քրեական դատավարության բոլոր փուլերում ներգրավված դատավարական սուբյեկտ, անչափահասների ներգրավմամբ վարույթներում վերջիններիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համատեքստում կոլեգիան կարևորում է դատախազի դերակատարությունը՝ ընդգծելով ինչպես անչափահաս տուժողների և վկաների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության գործում, այնպես էլ անչափահասների ներգրավմամբ վարույթներում դատախազների մասնագիտացման, ինչպես նաև նրանց պարբերաբար վերապատրաստման անհրաժեշտությունը:

Անդրադառնալով քրեական դատավարությանը ներգրավված անչափահաս տուժողների և վկաների՝ իրենց տարիքին, հասունության աստիճանին և առանձնակի կարիքներին համապատասխան հատուկ պաշտպանության, օժանդակության և աջակցության կարիք ունենալուն՝ հետագա բարդությունները և խեղումները կանխելու նպատակով, որոնք կարող են առաջանալ քրեական արդարադատության գործընթացներին նրանց մասնակցության արդյունքում, կոլեգիան կարևորում է վերջիններիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրավակիրառողներից, ինչը պահանջում է առանձնահատուկ մոտեցում և հատուկ գիտելիքների ու հմտությունների իմացություն՝ կրկնակի վիկտիմիզացիան (հանցագործության զոհի վերածվելու գործընթաց) կանխելու, քրեական գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ առավելագույն տեղեկություն ստանալու, վերջիններիս սպառնալիքից, բռնությունից ու ամեն տեսակի չարաշահումից զերծ պահելու և երեխայի լավագույն շահի պաշտպանությանն ուղղված այլ միջոցառումների իրականացման համար:

Այս առումով կոլեգիան կարևորում է վարույթն իրականացնող մարմնի կողմից այնպիսի միջոցառումների ձեռնարկումը, որոնք կհանգեցնեն հանցագործությունից տուժած և վկա անչափահաս երեխաների հարցաքննությունների թվի նվազեցմանը: Մասնավորապես, պետք է սահմանել տուժող և վկա երեխաներից ցուցմունք ստանալու հատուկ ընթացակարգեր՝ հարցաքննությունների, ցուցմունքների, արդարադատության գործընթացի հետ անհարկի շփումների թիվը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտության դեպքում տուժող և վկա երեխաները պետք է հարցաքննվեն (այդ թվում՝ դատարանում) հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի տեսադաշտից դուրս պայմաններում, ինչը հնարավորինս կապահովի նշված երեխաների պաշտպանությունը հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի կողմից հարցաքննվելիս:

Մեջբերվեցին իրավական առումով պարտադիր հանդիսացող մի շարք միջազգային համաձայնագրերում ամրագրված չափորոշիչներ, այդ թվում՝ ՄԱԿ-ի Տնտեսական և

սոցիալական խորհրդի «Անչափահասների արդարադատության իրականացման» 1997/30 բանաձևի («Վիեննայի սկզբունքներ») 49-րդ կետը, որը ևս սահմանում է քրեական դատավարության թե՛ մինչդատական, թե՛ դատական քննության փուլերում անչափահաս տուժողի և հանցավորի միջև ուղղակի շփումներից հնարավորինս խուսափելու անհրաժեշտությունը՝ անկախ տարբեր իրավական ավանդույթներ, պրակտիկա և իրավական կարգավորումներ ունենալու հանգամանքից: Նույն բանաձևի 50-րդ կետը, որը սահմանում է, որ անհրաժեշտության դեպքում անդամ-պետություններից պահանջվում է իրենց քրեական դատավարության օրենսգրքերում փոփոխություններ կատարել և, ի թիվս այլ միջոցների, նախատեսել երեխայի հարցաքննության տեսաձայնագրման հնարավորությունը, որը դատարանում կներկայացվի որպես թույլատրելի ապացույց:

Բացի այդ, նշվեց, որ նույն միջազգային համաձայնագրերով պետություններին առաջարկվում է նաև ըստ անհրաժեշտության ձևավորել գործնական ուղեցույց՝ տուժած երեխաների վերաբերյալ գործերի պատշաճ վարման վերաբերյալ: Այս համատեքստում հատկապես ընդգծվում է հայեցողական լիազորությունների կիրառման, գործի վերանայման, բողոքարկման, որոշումների վերահսկման և հաշվետվականության այլ համակարգերի ձևավորման վերաբերյալ ուղենիշներ մշակելու կարևորությունը:

Առաջարկվում է նաև երեխայի հանդեպ կիրառել զգայուն ընթացակարգեր, այդ թվում՝ երեխաների համար նախատեսված հարցաքննության սենյակներ, մեկ վայրում գործող բազմամասնագիտական ծառայություններ տուժող և վկա երեխաների համար, վերանայված դատական միջավայր, որն ուշադրություն է դարձնում վկա երեխաներին, երեխայի հարցաքննությունների ընդմիջումներ, լսումների նշանակում այնպիսի ժամի, որը համապատասխանում է երեխայի տարիքին և հասունությանը, ծանուցման պատշաճ համակարգ, որն ապահովում է, որ երեխան դատարան գնա միայն անհրաժեշտության դեպքում, ինչպես նաև երեխայի կողմից ցուցմունք տալու առումով նպաստավոր համապատասխան այլ միջոցներ:

Վերը նշվածից ելնելով՝ կոլեգիան արձանագրում է, որ ՀՀ օրենսդրությունն անչափահաս տուժողների իրավունքների պաշտպանության տեսանկյունից ունի բացթողումներ ու թերություններ, քանի որ երկրի արդարադատության համակարգն ամբողջ չափով հաշվի չի առնում քրեական գործերով անչափահաս տուժողների հատուկ խնդիրների և պահանջների առկայությունը: Այս առումով ՀՀ գործող օրենսդրությունը չի համապատասխանում նաև ոլորտի միջազգային չափանիշներին ու առաջադեմ փորձին, մինչդեռ, բարձրացված խնդիրներն ունեն համակարգային կախարելագործման կարիք:

Բացի այդ, կոլեգիան արձանագրում է, որ միջազգային իրավական գրեթե բոլոր փաստաթղթերում որպես քրեական վարույթին ներգրավված անչափահասների լավագույն շահի պաշտպանության երաշխիք կարևորվում է անչափահասների ներգրավմամբ վարույթների արտադատական կարգի ամրագրումը: Նշվեցին մի շարք պայմաններ, որոնք ըստ երեխաների իրավունքների կոմիտեի սահմանած նորմերի՝ պետք է պահպանել քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցներով փոխարինվելու դեպքում:

Վերոգրյալից ելնելով՝ կոլեգիան արձանագրում է, որ նշված պայմանների օրենսդրական ամրագրումը պահանջում է մանրակրկիտ ուսումնասիրություն և ՀՀ իրավական համակարգին համապատասխանեցում՝ խնդրահարույց իրավիճակներից ձեռնպահ մնալու համար:

Միաժամանակ, նշվում է, որ դատապարտված անչափահասներին պատժի ենթարկելը (հատկապես ազատազրկման ձևով) ձևավորում է «հանցագործի» ինքնություն, և երբ նրանք մեկ անգամ իրենց ընկալում են որպես հանցագործ, ինչպես նաև հանցագործ են ճանաչվում լայն հասարակության կողմից, նրանց համար ավելի դժվար է լինում հետագայում փոխվել և հարմարվել դպրոցական և ընտանեկան կյանքին, հետևաբար, կարևորվում է բոլոր

հնարավոր դեպքերում անչափահասներին դատական ընթացակարգերից հեռու պահելը և ազատությունից զրկելու հետ կապված պատժատեսակ կիրառելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում փորձ է արվել քրեադատավարական օրենսդրությունը հնարավորինս համապատասխանեցնել միջազգային չափորոշիչներին, այդ թվում՝ ներմուծված են անչափահասների վարույթների արտադատական կարգի կիրառման որոշակի տարրեր, սակայն դրանք չեն նույնանում անչափահասների արդարադատության արտադատական կարգի ներդրման հետ, քանի որ այս դեպքում ևս, եթե անգամ դատախազը կայացնում է անչափահասի վերաբերյալ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում, գործը վերջնականապես լուծվում է դատական ընթացակարգի միջոցով՝ դրանով անտեսելով ինստիտուտի կիրառման առաջնային նպատակը՝ լուծել իրավախախտ անչափահասների գործերը՝ առանց դատական ընթացակարգի դիմելու: Ավելին, դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վերաբերյալ միջնորդությունը մերժելու դեպքում դատարանը վերացնում է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը և վարույթի նյութերը վերադարձնում է դատախազին՝ քրեական հետապնդումը վերսկսելու համար:

Կոլեգիան արձանագրում է, որ անչափահասների արդարադատության ոլորտում միջազգային փաստաթղթերում ամրագրված պահանջների և ուղենիշերի համատեքստում արդի զարգացումներն անխուսափելիորեն պահանջում են հիշյալ ոլորտում քրեական հետապնդման մարմինների և դատարանի անհրաժեշտ պրոֆեսիոնալիզմի առկայություն: Դատախազի դերակատարությունը հիշյալ ոլորտում՝ հատկապես կապված անչափահասների ներգրավմամբ վարույթների արտադատական կարգի կիրառման, վկաների և տուժողների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության գործում նրա առանձնահատուկ դերի հետ, ավելի է ընդգծում ՀՀ դատախազության համակարգում անչափահասների (անչափահաս կասկածյալ, մեղադրյալ, տուժող, վկա) ներգրավմամբ վարույթներով զբաղվող մասնագիտացված դատախազների անհրաժեշտությունը, նրանց պարբերաբար վերապատրաստումը:

Այս առումով կարևորվում է Արդարադատության ակադեմիայում դատախազների տարեկան վերապատրաստման, ինչպես նաև դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց ուսուցման ծրագրերում դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) ցանկում անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության վերաբերյալ դասընթացների ամրագրումն ու կազմակերպումը:

Բացի այդ, կարևորում է դատախազների մշտական հետևողականությունը՝ անչափահասների կողմից, վերջիններիս ներգրավմամբ կամ նրանց նկատմամբ կատարված հանցագործությունների կատարման հանգամանքների վերացման նպատակով համապատասխան իրավասու իրավաբանական անձին կամ պաշտոնատար անձին միջնորդագրեր ներկայացնելու հարցում:

Վերը նշվածից բացի՝ կոլեգիան անդրադարձավ նաև ոստիկանության այն աշխատակիցների մասնագիտացման խնդրին, որոնք հաճախակի կամ բացառապես զբաղվում են անչափահասների հարցերով կամ ի սկզբանե ներգրավված են նրանց հանցավորության կանխարգելմանը՝ կարևորելով մասնագիտացված ոստիկանության աշխատակցի մշտական ներկայությունը ավագ և հատուկ դպրոցներում, ինչպես նաև համապատասխան ուսումնական հաստատությունների տնօրենների մշտական հետևողականության ցուցաբերումը նշված ոստիկանության աշխատակիցների վարքագծի նկատմամբ և դրա ոչ պատշաճ դրսևորման յուրաքանչյուր դեպքով ժամանակին արձագանքելը:

Ելնելով վերոգրյալից՝

ԿՈԼԵԳԻԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազներին, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին՝

1) 14 տարին չլրացած երեխայի նկատմամբ կատարված հանցանքի կապակցությամբ վարույթն իրականացնել հանրային մեղադրանքի կարգով, և ինչպես տուժողի, այնպես էլ նրա օրինական ներկայացուցչի հետ կասկածյալի կամ մեղադրյալի հաշտությունը հիմք չհամարել քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ երեխայի նկատմամբ անզգույշ հանցանքը կատարվել է նրա ծնողի կողմից և նման հաշտությունը բխում է երեխայի լավագույն շահերից:

2) Անհրաժեշտության դեպքում հանձնարարել նախաքննական մարմնին հանցագործությունից տուժած ու վկա անչափահաս երեխաների առերես հարցաքննությունը հանցանք կատարած անձի հետ կատարել վերջինիս տեսողական դիտարկումից դուրս:

3) Հանձնարարել նախաքննական մարմնին սահմանել հարցաքննության այնպիսի ընթացակարգեր, որոնք կնպաստեն հանցագործությունից տուժած ու վկա անչափահաս երեխաների՝ տվյալ քրեական գործով հարցաքննությունների նվազեցմանը:

4) Անչափահասների կողմից, ինչպես նաև վերջիններիս ներգրավմամբ կամ նրանց նկատմամբ կատարված հանցագործության յուրաքանչյուր դեպք դարձնել հատուկ քննարկման առարկա, քննությամբ պարզել անչափահասների կողմից հանցանքի կատարմանը նպաստող պայմաններն ու պատճառները, դրանց վերացման նպատակով միջնորդագրեր ներկայացնել տեղական ինքնակառավարման, ոստիկանության, կրթության, առողջապահության, անչափահասների խնամքով, դաստիարակությամբ զբաղվող մարմիններին ու հաստատություններին, անձամբ մասնակցել միջնորդագրերի քննարկմանը:

5) Հետևողական լինել անչափահասների գործերով մասնագիտացված դատախազների կողմից Արդարադատության ակադեմիայի տարեկան վերապատրաստումների ուսուցման ծրագրով դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) ցանկից անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության թեմաներով ուսումնական դասընթացների ընտրության հարցում:

2. Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին՝

1) Անչափահասների հետ տարվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու, նրանց շրջանում հանցավորությունը կանխելու, անչափահասների կողմից և նրանց մասնակցությամբ հանցագործությունների և այլ իրավախախտումների իրական պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները վերացնելու և անչափահասների վերաբերյալ օրենսդրության պահանջների կատարումն ապահովելու ընթացքում դատախազական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, անչափահասների հետ տարվող աշխատանքների միջոցառումների կիսամյակային ծրագրերը կազմել՝ համագործակցելով տեղական ինքնակառավարման

մարմինների անչափահասների գործերի հանձնաժողովների ու ոստիկանության, ինչպես նաև անչափահասների դաստիարակության և զբաղվածության հարցերով մյուս կազմակերպությունների հետ:

2) Անչափահասների կողմից կատարված հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ոստիկանության մարմիններից պահանջել ակտիվացնել տեղամասային տեսուչների, օպերիվագործների կողմից սպասարկվող տարածքների բնակիչների, ինչպես նաև ուսումնական հաստատություններում՝ անչափահասների շրջանում կանխարգելիչ-օպերատիվ միջոցառումների կատարումը:

3. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին, Երևան քաղաքի և մարզերի դատախազներին՝

Աշխատանքային պարտականությունների բաշխման կարգադրություններում կատարել փոփոխություններ՝ անչափահասների կողմից կամ անչափահասների նկատմամբ առերևույթ հանցագործության հատկանիշներով նյութերի նախապատրաստման, հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության, դատարանում մեղադրանքի պաշտպանության և դատախազական գործառույթների իրականացումը վերապահելով անչափահասների գործերով մասնագիտացված դատախազին (դատախազներին):

4. ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետին՝

1) Կազմել և ՀՀ գլխավոր դատախազի ստորագրմանը ներկայացնել ՀՀ ոստիկանության պետին, ՀՀ կրթության և գիտության նախարարին ուղղված հաղորդման նախագիծ՝ Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր ավագ դպրոցներում, ինչպես նաև Վարդաշենի թիվ 1 հատուկ դպրոցում անչափահասների հանցավորության կանխարգելմամբ մասնագիտացված ոստիկանության աշխատակիցների մշտական ներկայության ապահովման ուղղությամբ համատեղ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ, միաժամանակ, ՀՀ կրթության և գիտության նախարարին առաջարկել ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ համապատասխան ուսումնական հաստատությունների տնօրենների կողմից ոստիկանության աշխատակիցների վարքագծի նկատմամբ մշտական հետևողականություն ցուցաբերելու և դրա ոչ պատշաճ դրսևորման յուրաքանչյուր դեպքով ժամանակին արձագանքելու անհրաժեշտության ապահովման ուղղությամբ:

2) Կազմել և ՀՀ դատախազության համակարգի դատախազություններին, նախաքննական մարմիններին, ՀՀ ոստիկանություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն ուղարկել վարչության կողմից կազմված՝ 2013-2015թթ. ընթացքում միջազգային և միջպետական համապատասխան փաստաթղթերի պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման ապահովելու համատեքստում անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ոլորտում դատախազության լիազորությունների իրականացման արդյունավետության վիճակի վերաբերյալ կատարված ուսումնասիրության արդյունքները:

3) Կազմել և ՀՀ գլխավոր դատախազի ստորագրմանը ներկայացնել համապատասխան իրավական ակտի նախագիծ, ըստ որի՝ կատարել ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազների միջև աշխատանքային պարտականությունների բաշխում և ՀՀ գլխավոր դատախազի 29.10.2014թ. թիվ 85 հրամանով սահմանված ոլորտին վերաբերող պարտականությունները վերապահել անչափահասների գործերով մասնագիտացված ավագ դատախազին:

4) ՀՀ գլխավոր դատախազի ստորագրմանը ներկայացնել Արդարադատության ակադեմիայի ռեկտորին ուղղված գրության նախագիծ, ըստ որի՝ առաջարկել դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական ուսուցման տարեկան ծրագրում մտցնել անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության վերաբերյալ ուսումնական դասընթացներ, ինչպես նաև առաջարկել շարունակաբար կատարելագործել դատախազների տարեկան վերապատրաստման ծրագրում ներառված «Անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության» թեմայով դասընթացի ծրագիրը՝ դատախազների մասնագիտական կարիքներին համահունչ և ապահովել դրա շարունակականությունը: